# ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ.

## ՋԱՄԲՌ.

Բաղմարդիւն և արժանայիշատակ Սիմէօն Կաթուղիկոսի աշխատասիրած այս պատուական և հետաքրքրական գիրքը ի լոյս ընծայուեցաւ Մայր Աթոռոյ տպարանէն։

Բովանդակութիւնն է հակիրճ Եկեղ. պատմութիւն Հայոց, Էջմիածնի բազում անցից և աղետից նկարագիրը, Սսոյ, Աղթամարի և Գանձասարի՝ ինչպէս նա և Պօլսոյ մի քանի Պատրիարքաց ընթացից վերայ ժամանակակից նշանաւոր տեղեկութիւնք, Էջմիածնի կալուածներ և հրովարտակք և այլք յոկանէ յանուանէ, Ամանց Վանորէից, Վիճակաց, և Նուիրակական անօրէնութեանց վերայ ծանօթութիւնք, միանգամայն իւր գործառնութեանց պատմութիւնք։

Այսքա բոլորն տեղեկութեան և ուշադրութեան արժանի պարունակութիւնք լինելով, մանաւանդ Սսոյ և Էջմիածնի իրաւասութեան եղև. նկատմամբ ի ներքուստ և յարտաքուստ յարուած մեքենայութիւնք ներկայ ժամանակիս հետ բաղդատելոյ համար, անհրաժեշտ էր այսպիսի մի ընտիր հնութիւնը հաղորդել Ազգիս։

Գինն է առանց ծախուց ճանապարհի Գ ռուբլի։

---

## ՁԱՅՆԱԳՐԵԱԼ

## ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ.

Թէ՛ ծանր (տաղաւար եղն) և թէ՛ լուր աւուրց համար Ս. Պատարագի երգեցողութիւնք՝ Մեղեդիք, տաղք, և ամէն բան՝ ինչ որ Ս. Պատարագի երգեցողութիւնքը ըստ աւուր պատշաճի կկազմեն՝ բաց ի Ճաշու Շարականաց, երկու կերպ (ձոնք և յորդոր) ձայնագրեալ տպագրելով ի լոյս ընծայեցաւ։

Սորա մէջ առաւօտեան և երեկոյեան ժամերգութեանց մի քանի կարևոր Ներգեր ևս իբրև ի Յաւելուած տպուած են։

Գինն է հատն ռբլ։

# ԴԱՍԱԳԻՐՔ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

Հայկական Եկեղեցական ձայնագրութիւնը ընդփոյթ ընդհանրացնելոյ և արդիւնաւորելոյ համար՝ Պ. Նիկողայոս Թաշճեանց քաջահմուտ ձայնագրագէտ դասատուն պատրաստեց այս դասագիրքը, որ կարի փորձառու կանոնովք և դիւրահասկանալի եղանակով յօրինուած է։

Գինն է յիսուն կոպ։

---

## ՕՐԱՑՈՅՑ

1875 ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ.

Յառաջակայ 1875 Թուականի Օրացոյցը Մայր Աթոռոյս Տպարանէն հրատարակուեցաւ։

Սովորականէն զատ՝ մի քանի ընտիր քերթուածներ, և առողջապահութեան վերաբերեալ և Պատմական կենցաղօգուտ գիտելիքներ եւն. կան։

Ամենայն տեղ գինն է 20 կոպ։

---

Ընդ մամլով են

ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ՇԱՐԱԿԱՆ

ԴԱՍԱԳԻՐՔ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՅ։